ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

02.10.2024թ. N 44 ՀՐԱՄԱՆԻՑ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ պետական պահպանության ծառայության և «Ռուդիկ Աբրոյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Մասնակից) միջև 26.04.2024թ. կնքված ՊՊԾ-ԳՀԾՁԲ-2024/19-2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում Մասնակիցը խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Ռուդիկ Աբրոյան» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ՊՊԾ պետ **Ա. Գասպարյան**

ՀՀ ՊՊԾ գործունեության ապահովման բաժնի պետի տեղակալի ՊԺԿ, մայոր **Գ. Ունուսյան**